«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ<< Մակբայի ուսուցումըհամագործակցային ուսուցման, ինքնաստուգման առաջադրանքների միջոցով>>

ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու և գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Վարդանյան Ջեմմա
ՄԱՐԶ	Արագածոտնի մարզ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Գեղադիրի Ռ.Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Նարինե Զաքյան

Բովանդակություն

Ներածություն 3
Գլուխ 1.Համագործակցային ուսուցում
1.1. Համագործակցային ուսուցման էությունը …….....… 5
1.2. Համագործակցային ուսուցման առավելությունները …….....… 7

Գլուխ 2. Մակբայ
2.1. Մակբայ, տեսակները, կազմությունը …….....….……...….....8
2.2 Մակբայի ուսուցումը համագործակցային ուսուցման, ինքնաստուգման առաջադրանքների միջոցով
.....……...…….……. . 10
Եզրակացություն 16
Հավելվածներ .....16 Օգտագործված գրականության ցանկ.....26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով և անկանխատեսելիորեն: Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը: Այն ինչ մի ժամանակ թվում էր հավերժական ու անփոփոխ, այսօր միայն հարաբերական է կամ նույնիսկ ամբողջությամբ՝ սխալ:

Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ կան դասավանդման և ուսուցման ձևեր, որոնք այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետևաբար ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Չնայած իր տարածմանը ուսուցիչների շրջանում և երկարատև պատմությանը, այն չի գտել լայն կիրառում: Դրա պատճառն ամենևին սովորողների առաջընթացի և ընդհանուր զարգացման վրա համագործակցային ուսուցման դրական ազդեցության վկայությունների բացակայությունը չէ: Իրականում, համագործակցային ուսուցումը ժամանակակից կրթության, դասավանդման և ուսուցման ամենաշատ ուսումնասիրված ոլորտներից մեկն է: Համացանցում բազմաթիվ ենհամագործակցային ուսուցման մասին հոդվածներն ու ուսումնասիրությունները: Կարճ ասած՝ գիտելիքների հասարակությունում անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ուսուցման վերաբերող հետազոտությունների արձագանքները դրական են: Բայց հայկական դպրոցներում հազվադեպ ենք կիրառում այս հետաքրքիր ու արդյունավետ մեթոդը, քանի որ այն աշխատատար և երկարաժամկետ արդյունք ունեցող մեթոդ է:

Համագործակցային մանկավարժության նպատակն այնպիսի մեթոդների կիրառումն է, որոնք ուսման գործընթացը վերածում են սոցիալական շփման: Հիմնական իմաստն աշակերտների՝ որպես գործընկերների խմբի համագործակցությունն է: Գոյություն ունեն համագործակցային կրթության և ուսուցման բազմաթիվ մեթոդներ (նախագծերի մեթոդը, քննարկումը, խնդիրների լուծման վրա հիմնված և դիտարկման միջոցով իրականացվող ուսումը և այլն): Այս մեթոդներից յուրաքանչյուրի համար գոյություն ունեն համատեղ աշխատանքի տարատեսակ եղանակներ, վարժություններ և առաջարկություններ: Համագործակցային մեկ ճիշտ մեթոդ գոյություն չունի, սակայն կա համագործակցային մի քանի եղանակ, և ավելին՝ ներկայումս գոյություն ունեն հարյուրավոր վարժություններ և կազմակերպման եղանակներ: Հետևաբար, ուսուցիչները կարող են այս կամ այն մեթոդը որդեգրելու փոխարեն ընտրել տվյալ մանկավարժական իրավիճակին համապատասխանող լուծում, իսկ այլ իրավիճակում՝ կիրառել այլ լուծումներ:

Բացի գիտելիք փոխանցելուց, այս եղանակը նպատակ է հետապնդում զարգացնել աշակերտի՝ խնդիրներ լուծելու և համագործակցելու կարողությունները: Խնդիրների լուծմանվրա հիմնված ուսման դեպքում աշակերտը պետք է ինքնուրույն հետազոտություն իրականացնի, կարողանա ըմբռնել խնդրի էությունը, ինչպես նաև ունենա ՏՏ ոլորտում որոշգիտելիքներ, ուսման այս մեթոդի նպատակներից է նաև նշված կարողությունների զարգացումը: Այս դեպքում ուսուցիչը կատարում է համակարգողի կամ խորհրդատուի դեր: Խնդիրների լուծման վրա հիմնված ուսուցումն աշակերտներին սովորեցնում է, թե ինչպես է պետք սովորել: Աշակերտները սովորում են խմբի անդամների հետ համագործակցությամբ՝ լուծումներ գտնելով իրական կյանքից վերցված խնդիրների համար: Միաժամանակ նրանք սովորում են, թե ինչպես առավելագույնս

արդյունավետ համակարգեն իրենց ուսման գործընթացը։ Այս մեթոդի հիմնական իմաստն այն է, որ աշակերտի կարողություններն օգտագործվում են ոչ թե պատրաստի գիտելիք տրամադրելու, այլ գիտելիք քաղելու նպատակով։ Այն դասարաններում, որտեղ աշակերտներն այս մեթոդն են կիրառում, նրանք

հասկանում են, թե ինչպես է ուսումը դառնում գիտելիքի որոնման գործընթաց։ Աշակերտների մոտ ձևավորվում է քննադատական մտածելակերպ, որն իրենց հնարավորություն է տալիս ձեռք բերվող տեղեկությունները փոխկապակցել այն նպատակիհետ, որի իրականացման համար կարող են օգտագործվել այդ տեղեկությունները։ Խնդիրների լուծման և ուսման գործընթացի հաջողությունը կախված է աշակերտների դպրոցական և արտադպրոցական արդյունավետ աշխատանքից։ Առաջադրանքների խմբային կատարումը խնայում է ժամանակը և զարգացնում է խմբի անդամների շփման և բանավոր խոսքի կարողությունները։

Մանկավարժական տեխնոլոգիաների, համագործակցային մեթոդների նկարագրությունները նպատակ չունեն առաջարկելու ուսուցման կազմակերպման հստակ դեղատոմսեր, բայց կարող են նախանշել դասավանդման արդյունավետության ապահովմանբնութագրիչները։ Կրթական գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե ուսուցումը որքանով է ուղղորդված դեպի սովորողները և հասարակությունը, ինչպես են մատուցվում, գնահատվում սովորողների գիտելիքները, նրանց կարողությունները և հմտությունները։Կրթական գործընթացի արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությամբ, որոնք օգնում են հասնել ծրագրի վերջնարդյունքներին, նպաստելով սովորողների կոմպետենցիաների ձեռքբերմանը։Ուսուցման մեթոդները դրանք ուսուցչի և աշակերտների համատեղ գործունեության միջոցներ են ուղղված կրթական նպատակների ձեռքբերմանը։ Ուսուցման մեթոդներն իրենց մեջ ներառում են դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներ։ Դասավանդման մեթոդներն այն մեթոդներն են, որոնց օգնությամբ հաղորդվում են գիտելիքներ, ձևավորվումեն կարողություններ և հմտություններ։ Ուսումնառության մեթոդների օգնությամբ ուսումնառողները ձեռք են բերվում անհրաժեշտ գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ և հմտություններ։ Գնահատման մեթոդները միտված են արժանահավատ կերպով աշակերտների կողմից կրթական վերջնարդյունքների ձեռքբերման չափմանը։ Այս մեթոդները փոխկապված են և շատ դեպքերում դասավանդման մեթոդը կարող է հանդես գալ որպես ուսումնառության մեթոդ կամ նաև գնահատման մեթոդ։ Օրինակ դերային խաղը և ուսուցման, և գնահատման մեթոդ է, աշխատանք գրքով և ուսումնառության, և դասավանդման մեթոդ է։

Գլուխ 1.
Համագործակցային ուսուցում

1.1. **Համագործակցային ուսուցման էությունը**: Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածությանապահովումը:

Համագործակցային ուսուցումը կատարվում է ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերով: Համագործակցային ուսուցման ֆորմալ խմբերը փոքր են՝ 2-4 անդամ: Հանձնարարականների ռազմավարությունը հետևյալն է՝

1. խմբերը ձևակերպում են առաջադրանքը, լուծում այն և պատրաստվում ներկայացնել,
2. պատահականորեն ընտրված խմբի անդամը ներկայացնում է խմբի աշխատանքի արդյունքը,
3. բոլոր անդամները քննարկում են բոլոր լուծումները, տալիս հարցեր,
4. յուրաքանչյուր խումբ պատրաստում և ներկայացնում է աշխատանքի հաշվետվություն:

Համագործակցային ուսուցման ոչ ֆորմալ խմբերը ժամանակավոր գործող խմբեր են, որոնք օգտագործվում են դասախոսության, դիդակտիկ նյութերի ցուցադրման, ֆիլմ դիտելու ժամանակ սովորողների ուշադրությունը ուսուցանվող նյութի վրա կենտրոնացնելու, ուսուցման ընթացքում օգտոգործվող նյութերը նախապատրաստելու համար: Համագործակցային հենակետային խմբերը կայուն անդամներով երկարաժամկետ խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի, ծրագրի շրջանակներում: Խմբի անդամները միմյանց օգնում են, աջակցում, խրախուսում՝ նպաստելով առաջադրանքի կատարմանն ու գիտելիքների ձեռքբերմանը: Դրանք մշտական են և ապահովում են երկարաժամկետ, գործընկերային փոխհարաբերություններ:

Համագործակցային ուսուցման մեթոդներն են՝

1. Աշակերտների թիմային առաջադիմություն
2. Խճանկար
3. Շրջագայություն պատկերասրահում
4. Երեք բանալի և մեկ կողպեք
5. Հինգրոպեանոց ազատ շարադրանք:

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկմիջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

Խճանկար: Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի A&M համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների

կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից։ Խճանկարի փուլերն են.

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում։

Շրջագայություն պատկերասրահում։ Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբարև ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ։

Երեք բանալի և մեկ կողպեք։ Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով։Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան։ Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն։

Հինգրոպեանոց ազատ շարադրանք։ Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարողէ կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից։ Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը։

Համագործակցության վրա հիմնված ուսուցումը խմբային ուսուցման ամենաբարձր մակարդակն է։ Խմբերի ձևավորման այս եղանակի դեպքում խմբի անդամները մեծապես ապավինում են միմյանց, ուստի զուտ առարկային առնչվող նյութեր յուրացնելուց բացի նրանք ձեռք են բերում նաև շփման հմտություններ։ Ուսուցիչն աշակերտներից չի պահանջում նման հմտություններ ունենալ. փոխարենը, նա նպաստում է դրանց զարգացմանը՝ կիրառելով համագործակցություն ապահովող տարատեսակ մեթոդներ։

Ինքնաստուգումը գնահատման մեթոդներից է, երբ աշակերտն ինքնուրույն բացահայտում է իր աշխատանքում թույլ տված սխալները, անում է համապատասխան ուղղումներ և ավելի է բարձրացնում իր գիտակցականության մակարդակը ուսուցման գործընթացում։

1.2. **Համագործակցային ուսուցման առավելությունները:** Աշխատանքի այսօրվա աշխարհը կարևորում է թիմային աշխատանքը և աշխատակիցների միջև համագործակցությունը: Ժամանակակից ընկերությունները դառնում են ավելի ու ավելի հորիզոնական և ավելի ու ավելի քիչ հիերարխիկ, ինչը թույլ է տալիս առաջատարների իհայտ գալը գործարար աշխարհում և, հետևաբար, առաջանում է անհրաժեշտություն, որառաջնորդները պատասխանատվությունը փոխանցեն հենց իրենց աշխատակիցներին: Նույն գործընթացը հնարավոր է անել դասարանում: Սոցիալական հմտություններն ավելի ու ավելի են դիտարկվում ապագա մասնագետների վերապատրաստման ժամանակ: Ընտանիքում, դպրոցում և համայնքում միասին աշխատելը կարևոր է այսօրվա թվային դարաշրջանի մարտահրավերներին և դրա ստեղծած սոցիալական տարբերություններին դիմակայելու համար:

Համագործակցային ուսուցման առավելությունները առավել ցայտուն են երևում հենց ուսուցման տարրերի հետ: Դրանք են՝

1. **Դրական փոխկախվածությունը.** Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:

2. **Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցությունը**. Խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծումեն տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:

3. **Անհատական հաշվետվությունը և պատասխանատվությունը.** Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:

4. **Սոցիալական հմտությունները.** Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդում ունենալը:

5. **Խմբային գործընթացը.** Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները,ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

Գլուխ 2.

Մակ բ այ , մակբայի ուսուցում:

2.1. Մակբայ խոսքի մասը, տեսակները, կազմությունը: Լեզվում կան բառեր, որոնք արտահայտում են գործողության (հատկանիշի) հատկանիշներ, օրինակ՝ հերոսաբար կռվել, դանդաղորեն քայլել, անմիջապես օգնել, չափազանց դժվար: Գործողության (հատկանիշի) հատկանիշներ ցույց տվող բառերը միավորվում են մակբայ խոսքի մասի մեջ:

Մակբայները լինում են տեղի, ձևի, չափ ու քանակի, ժամանակի: Տեղի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման տեղը, օրինակ՝ ամենուրեք, դեմ դիմաց, հեռու, մեջտեղ, գյուղեգյուղ, դռնեդուռ: **Ձևի մակբայները** ցույց են տալիս գործողության կատարման ձևը, օրինակ՝ արագ, բարեկամաբար, դանդաղ, հոտնկայս, ներքուստ, արտաքուստ: **Չափ ու քանակի մակբայները** ցույց են տալիս գործողության կատարման չափը, հատկանիշի դրսևորման աստիճանը, օրինակ՝ ամբողջովին, լիովին, գրեթե,մոտավորապես, բազմիցս, մասամբ, չափազանց, փոքր-ինչ, իսպառ, քառակի: **Ժամանակի մակբայները** ցույց են տալիս գործողության կատարման ժամանակը, օրինակ՝ այժմ, այլևս, այսուհետև, վաղուց, առայժմ, միշտ, հիմա, հավիտյան:

Որոշ մակբայներ բազմիմաստ են և տարբեր նախադասություններում կարող են արտահայտել տարբեր իմաստներ: **Սրանք կոչվում են ընդհանրական մակբայներ**, օրինակ՝ Շուտ-շուտ այցելում է (չափ). Շուտ-շուտ ուտում էր (ձև): Սրանց տեսակը որոշվում էըստ տվյալ կիրառության: Ընդհանրական մակբայները գործածվում են երկու և ավելի մակբայական նշանակություններով: Ընդհանրական մակբայներն են

1. տարբեր կիրառություններով՝ տարբեր իմաստ- մեկ-մեկ, առաջ, շուտ-շուտ, բերնեբերան, հետ, ուշ-ուշ

2. նույն կիրառությամբ՝ տարբեր իմաստ-անընդհատ, մերթ-մերթ, իսպառ, դեմ առ դեմ, իսկույն, մերթընդմերթ, հաճախ, ամբողջովին, բոլորովին, անդադար, շարունակ և այլն:

- Ընդհանրական մակբայներ կարող են հանդես գալ նաև այլ խոսքի մասի արժեքով: Դրանք են՝
- գոյական- մակբայ- վաղը, այսօր,
- ածական- մակբայ - արագ, եռապատիկ, միահամուռ, դանդաղ, շտապ և այլն,
- կապ- մակբայ- առաջ, հետո:

Մակբայները կազմությամբ բաժանվում են հետևյալ տեսակների.
Պարզ մակբայներ

- նախ, ուշ, դեռ, ապա, հար,
- վեր, միշտ, հաճախ, շտապ,
- արագ, իսկույն, մերթ,
- դանդաղ, շուտ

Ածանցավոր մակբայներ

- քաջաբար, հայրաբար,
- պատահաբար,խորապես,
- վարպետորեն, ցավագին,
- գիտականորեն, կամովին,
- հաճախակի, քառակի

Բարդ մակբայներ

- տող-տող, քիչ-քիչ, մեկ-մեկ,
- արագ-արագ, տնետուն, միաբերան, տեղնուտեղը, փոքր-ինչ, գիշեր-ցերեկ,
- քայլ առ քայլ, դեմուդեմ

Քերականական և նկարագրական ձևերից առաջացած

- ***Քերականական***
- Քերականական ձևերից կազմված մակբայներն առաջացել են գոյականի և բայի թեքման ձևերից.
- ա. Բացառական՝ ներքուստ, արտաքուստ, վաղուց, հնուց, միանգամից և այլն:
- բ. Գործիական հոլովից՝ դիտմամբ, մասամբ, պատահմամբ, հազիվ և այլն:
- գ. Ներգոյական ՝ առաջիկայում, ներկայումս, հնում, հիմնականում և այլն:
- դ. Հայցական՝ ցմահ, ներս, դուրս, ցայսօր և այլն:
- ե. Բայի խոնարհման կամ դերբայական ձևերից առաջացած մակբայներ՝ դարձյալ, համարյա, գրեթե և այլն:

Նկարագրական

Նկարագրական մակբայներն առաջացել են վերլուծական եղանակով, դրանք կիսակայուն կապակցություններ են, ունեն մակբայական կիրառություն, հիմնականում երկբաղադրիչ են՝ վերին աստիճանի, ամենից առաջ, մեծ մասամբ, ազատ կերպով, օր օրի և այլն:

Նախադասության կազմում մակբայները կատարում են տեղի, ձևի, չափ ու քանակի, ժամանակի պարագաների շարահյուսական պաշտոններ:

2.2 Մակբայի ուսուցումը համագործակցային ուսուցման ,ինքնաստուգման առաջադրանքների միջոցով: Ուսուցման գործունեությունը բաղկացած է հետևյալ օղակներից՝ ուսուցիչը բացատրում է դասանյութը, աշակերտների ուժերով կատարում է մի շարք առաջադրանքներ՝ բացատրածը ավելի լավ հասկանալու և հասկացածն ամրապնդելու համար, որից հետո ստուգվում է յուրացվածը: Ստուգման արդյունքների հիման վրա ուսուցիչը կատարում է համապատասխան աշխատանքներ՝ կա՛մ նորից է բացատրում, կա՛մ լրացնում է պակասը, ուղղում սխալը և այլն: Երբ նա համոզվում է, որ նյութը յուրացվել է, անցնում է նոր դասանյութին: Սա ուսուցման պրոցեսի իդեալական պատկերն է: Իսկ իրականում ուսուցիչը ի վիճակի չէ ստուգելու յուրաքանչյուր աշակերտի՝ տվյալ նյութին վերաբերող գիտելիքների յուրացման մակարդակը, որովհետև դա նույնիսկ մի մարդու համար ֆիզիկապես անհնար է, մանավանդ այն դասարաններում, որտեղ աշակերտների թիվը հասնում է մինչև 35-ի:: Ուրեմն, ուսուցիչը դասարանի վիճակի մասին ստիպված է գաղափար կազմել մի քանիսի գիտելիքները ստուգելով միայն: Նման պայմաններում շատ աշակերտներ դուրս են մնում ուսուցչի տեսադաշտից՝ դրանից բխող բազմաթիվ անցանկալի հետևանքներով:Այդ պատճառով դասի պլան կազմելիս, նպատակներ սահմանելիս մենք պիտի հաշվի առնենք այս փաստը: Այս թերության վերացման միջոցներից մեկը համագործակցային ուսուցումն է: Ներկայացնում եմհամագործակցային ուսուցման դասի օրինակներ, որոնք կազմել /բացի 1-ից/ և փորձարկել եմ հենց այս ուսումնական տարվա սկզբում, 8-րդ դասարանում <<Մակբայ >> թեման ուսումնասիրելիս: Յուրաքանչյուր պլանի վերջում ներկայացրել եմ նաև դասի վերլուծությունն ու եզրակացությունը:

Դասի պլան 1.



Դասի պլան 2. Մակբայ կոմպետենցիայի բաղադրիչով Դասի

պլան 3. Մակբայ

Դասի պլան 4Դ

ասի ինկարագրություն.

Դասի սկզբում գրատախտակին գրեցի նախադասություններ՝ գործածելով մակբայներ:

Ուժգնորեն շառաչող կատաղի քամին սպառնում էր հոյակապ շինությանը:

Աշակերտներին ասում եմ՝ նկատեցիք, որ այդ նախադասությունների մեջ բայի վրա են դրված բառեր և ցույց են տալիս՝ օրինակ՝ առաջինը գործողության կատարման ձևը, երկրորդն երրորդը՝ գործողության կատարման տեղը, չորրորդը՝ ժամանակը, հինգերորդը՝ չափը: Այստեղից կարելի է ենթադրել, որ մակբայները բաժանվում են չորս խմբի՝ տեղի, ժամանակի,ձևի և չափի:

Ապա բացատրում եմ «մակբայ» տերմինը/եզրույթը, որն է՝ մակ+բայ. այսինքն բայի վրա դրվող:

Համագործակցային ուսուցումը իրագործելու համար մեզ օգնության է գալիս «Խճանկար» մեթոդը:

Դասարանը բաժանվում է 4 խմբի, յուրաքանչյուր խմբին տրվում է արդեն պատրաստ առաջադրանքներ, որոնք նախադասություններ են, որտեղ ընդգծված բառերը մակբայներ կամ ածականներ են:

1. Նշել, թե ո՞ր խոսքի մասին է լրացնում ընդգծված բառը:
2. Առանձնացնել գոյականները իրենց լրացումներով:
3. Առանձնացնել բայերը իրենց լրացումներով:
4. Ընդգծված բառերով կազմել նոր բառակապակցություններ:

Ապա յուրաքանչյուր խմբից մեկ աշակերտ իր խմբի աշխատանքը գրում է գրատախտակին և բացատրում, թե ինչու իրենք այդ տարբերակը ընտրեցին: Եթե սխալներ են լինում, դիմումեմ մյուս խմբին և փորձում նրանց միջոցով ստուգել և հետևաբար, ստուգել նաև նրանց գիտելիքը: Եթե ճիշտ պատասխան չի հնչում, կամ պատասխանները լինում են կցկտուր ու անճիշտ, ես միջամտում եմ, ուղղում, նորից բացատրում՝ հիշեցնելով բայ, գոյական խոսքի մասերը և նրանց լրացնող հնարավոր բառերը:

Ապա նորից եմ բացատրում «մակբայ» տերմինը, ասում, որ այն կազմված է մակ+բայ բաղադրույթներից և նշանակում է բայի վրա դրվող: Ապա I, II խմբերին հանձնարարում եմ գրել փոքրիկ պատմվածք իր մայրիկին կորցրած և անտառի մթին թավոտներում մոլորված ուլիկի կամ ծովի ահեղամռունչ ալիքների տնօրինությանը մատնված մարդկանցով լի նավակի մասին՝ օգտագործելով մակբայները:

III, IV խմբերին տրվում է հետևյալ առաջադրանքը.կազմել ընկերական փոխհարաբերությունների մասին պատմող նախադասություններ՝ գործածելով նաև առայժմ, դարձյալ, արագ, ընդառաջ, դանդաղ մակբայները:

Այս մեթոդը օգնում է աշակերտների մեջ զարգացնել ոչ միայն քերականական գիտելիքներ, այլ նրանց ստեղծագործական ընդունակությունները և գրավոր խոսքը:

Ապա կարելի՝ կատարել ինքնաստուգման առաջադրանքներ, օրինակ՝ հետևյալ սահմանումների մեջ գտնել միայն մակբային վերաբերողը.

1. Այն խոսքի մասը, որը ցույց է տալիս առարկաների, իրերի և երևույթների ու նրանց հետ կատարվող գործողությունների տեղը, ժամանակը, ձևը, չափն ու քանակըկոչվում է…
2. Այն խոսքի մասը, որը ցույց է տալիս կատարվող գործողության տեղը, ժամանակը, ձևը, չափն ու քանակը կոչվում է…
3. Այն բառերը, որոնք ցույց են տալիս տեղ, ժամանակ, ձև, չափ ու քանակ կոչվում են…
4. Միայն գործողության տեղ, ձև, չափ ու քանակ ցույց տվող խոսքի մասերը կոչվում են…

Ապա աշակերտները ստանում են յուրաքանչյուր հարցին տրվող պատասխանները բացատրություններով և համեմատում իրենց պատասխանի հետ: Երեխաները ուսումնասիրում են այն և այստեղ օգնության են գալիս «Շրջագայություն պատկերասրահում» մեթոդը, որը «Խճանկարի» մի տարատեսակ է:

Յուրաքանչյուր խմբից մեկ աշակերտ մոտենում է գրատախտակին, գրում կամ ընթերցում իր մոտ եղած պատասխանը:

(I խումբը 1-ին հարցի պատասխանը և այդպես հաջորդաբար մինչև 4-րդ հարցը):

Առաջին հարց: Պատասխանը ճիշտ չէ: Ընդգծված սահմանման առաջին մասը, որ նշած է, թե մակբայ են կոչվում առարկաների, իրերի և երևույթների տեղը, ժամանակը, ձևը, չափն ու քանակը ցույց տվող բառերը մակբային չի վերաբերվում: Օրինակ՝ (օրինակը գրվում է գրատախտակին) Սեղանին դրված գիրքը շատ էր գրավել Աշոտին: Այս նախադասության մեջսեղանին բառը տեղ է ցույց տալիս, բայց գոյական է՝ դրված տրական հոլովով:

«Գիշերը ցուրտ կլինի» նախադասության մեջ գիշեր բառը ժամանակ է ցույց տալիս, բայց դարձյալ գոյական է՝ դրված հայցական հոլովով:

Ընտրված սահմանման (կանոնի) միայն երկրորդ մասն է ճիշտ: Այսինքն՝ սահմանման 1-ին մասը մակբային չի վերաբերում:

Երկրորդ խմբի աշակերտն է մոտենում գրատախտակին և հայտնում, որ ճիշտը այդ հարցն է քանզի մակբայը գործողության տեղը, ժամանակը, ձևը և չափ ու քանակն է ցույց տալիս: Օրինակ՝

Ես այդ մասին գիտեմ վաղուց.

Պատանին ձին կապել էր ծառին և ջանասիրաբար մաքրում էր ճանապարհըԱրագ

մշուշ էր մեր լեռան վրա, վաղը նորից արև կծագի:

Ամենուրեք մահ էր ու ավերածություն:

3-րդ հարցի պատասխանը սխալ է: Կան շատ բառեր, որոնք ժամանակ են ցույց տալիս, բայց մակբայ չեն: Օրինակ՝ Վահագնը այս ժամին գրադարանում է լինում: Ժամը վեցին Վահանը թատերասրահում է լինելու: Այս նախադասությունների մեջ այս ժամին բառակապակցությունը ժամանակ է ցույց տալիս, սակայն կազմված է դերանունից և գոյականից, իսկ վեցին բառը թվական է՝ դրված տրական հոլովով:

Կան շատ բառեր, որոնք ձև են ցույց տալիս, բայց ոչ թե գործողության, այլ առարկայի, ուստի չեն կարող մակբայ լինել:

4-րդ հարցի պատասխանը լիարժեք չէ: Այս սահմանման մեջ բաց է թողնված գործողության ժամանակ ցույց տվող մակբայը: Մակբայները ցույց են տալիս ոչ միայն գործողության տեղը,ձևը, չափն ու քանակը, այլև ժամանակը:

Այս սահմանումը կիսատ է, այլ կերպ ասած, մակբայի ոչ բոլոր հատկանիշներն են թվարկում: Այս ձևով է բացատրվում «Մակբայ» խոսքի մասի յուրաքանչյուր թեման:

Ինչպես հայտնի է, աշակերտները հաճախ կարդալը և սովորելը չեն տարբերում իրարից: Նրանք տանը մի քանի անգամ կարդում են դասանյութը, լավագույն դեպքում ինչ-որ չափով փորձում վերարտադրել սովորածը և գալիս դպրոց: Դասարանում չկարողանալով բավարար կամ լավ պատասխանել, նրանք հուզվում են, նեղսրտում, որովհետև իրենց կարծիքով, դասը սովորել էին: Նրանք երբեմն չեն ընդունում ուսուցչի դիտողությունը՝ դասը չսովորելու մասին: Նրանք, իհարկե, այս հարցում այնքան էլ մեղավոր չեն, որովհետև ոչ միշտ են տանը կարողանում ստուգել դասին պատրաստված լինելը:

Ինքնաստուգման առաջադրանքները վերացնում են այդ թերությունները:

Այս ուսուցմանը շատ է օգնում քարտային սիստեմը, որը հնարավորություն է տալիս ամեն օր ստուգել և գնահատել բոլոր աշակերտների գիտելիքները՝ ծախսելով ընդամենը 5 րոպե: Օրինակ՝ «Մակբայ» թեմայի մանրամասն ուսուցման համար կարելի է ծախսել ընդամենը մեկ ակադեմիական ժամ: Այդ նպատակով պետք է կազմել հարցեր, որոնցից յուրաքանչյուրն ունենա 4 պատասխան, որոնցից մեկն է միայն ճիշտը, և աշակերտը պետք է կարողանա ընտրել այդ միակը և համապատասխան նշում կատարել:

Քարտերը 4-ական հարց են պարունակում և հետևյալ տեսքն ունեն:

1	1	2	3	4
2				

3				

4				

Հորիզոնական թվանշանները ցույց են տալիս հարցերի, իսկ ուղղահայացները՝ պատասխանների համարները: Մեկ հարցին տրված 4 պատասխաններից անհրաժեշտ է ընտրել մեկը և նշում անել համապատասխան վանդակում:

Բերեք նման առաջադրանքների մի օրինակ

Ժամանակի մակբայ

1. Այս 4 սահմանումների մեջ միայն մեկն է, որը ճիշտ և ամբողջապես է բնութագրում ժամանակի մակբայը: Գրեք այդ սահմանումը:

ա) Չհոլովվող այն բառերը, որոնք ցույց են տալիս գործողության կատարման ժամանակը, կոչվում են ժամանակի մակբայներ: Ժամանակի մակբայը պատասխանում է ե՞րբ հարցին:

բ) Այն խոսքի մասերը, որոնք գործողության կատարման ժամկետն են ցույց տալիս, կոչվում են ժամանակի մակբայներ: Դրանք պատասխանում են ե՞րբ հարցին:

գ) Ե՞րբ հարցին պատասխանող այն բոլոր բառերը, որոնք ժամանակ, տեղ ձև, չափ ու քանակ են ցույց տալիս, չեն հոլովվում և հոդ են ընդունում, կոչվում են ժամանակի մակբայներ:

դ) Ե՞րբ հարցին պատասխանող այն բոլոր բառերը, որոնք ցույց են տալիս գործողության ժամանակը, առանց հոլովվելու և հոդ ստանալու, կոչվում են ժամանակի մակբայներ:

2. Առաջին հարցի տակ դրված մակբայների 4 սահմանումներից մեկի մեջ բացակայում է մակբայի մեկ ձևական հատկանիշի նշումը:

Գտնել այդ սահմանումը

3. Առաջին հարցի տակ դրված մակբայների 4 սահմանումներից մեկի մեջ չի նշվում մակբայի 2 ձևական հատկանիշը, որով նրանք տարբերվում են նշանակությամբ մակբային նմանվող մյուս խոսքի մասերից: Գտնել այդ սահմանումը:

4. Առաջին հարցի տակ բերված մակբայների 4 սահմանումներից մեկի մեջ խախտված է սահմանման ձևը, որի պատճառով էլ նա միայն ժամանակի մակբայ չէ, որ կարող է վերաբերել: Գրել այդ սահմանումը:

Կարելի է պատրաստել ավելի շատ հարցեր պարունակող քարտեր՝ գիտելիքների ավելի մեծ բնագավառ ստուգելու h ամ ար :

Փորձը ցույց տվեց, որ աշակերտները հետաքրքրությամբ են սովորում նմանօրինակ ուսուցմամբ, ինչպես իրենք են ասում, երբեք չեն մոռանում սովորածը:

Տրվող առաջադրանքները, որ տարբեր են նյութի բոլոր բաղադրամասերի համար, աշակերտների մոտ ձևավորում են դասի պատասխանները տարբեր ձևերով կառուցելու ցանկություն և սովորություն:

Այս երևույթի արդյունքն այն է լինում, որ դասարանում նստած և իրենց ընկերների պատասխանները լսող աշակերտները երբեք չեն ձանձրանում:

Սովորածի վերարտադրության վերը նշված ձևը ինչ-որ չափով օգնում է ուսուցչին՝ դասի այս մասը առավել արդյունավետ դարձնելու գործում: Աշակերտի պատասխանները գնահատելիս պետք է հաշվի առնել աշակերտի կողմից դասանյութի վերարտադրության ինքնատիպությունը և ունկնդիրների համար պատասխանի հետաքրքրական լինելը:

Համագործակցային ուսուցման մյուս արժանիքը ուսուցման և զարգացման միտումն է: Հայտնի է, որ ուսուցումը աշակերտին գիտելիքներ, հմտություններ և կարողություններ տալու հետ միաժամանակ պետք է ապահովի և նրանց մտավոր զարգացումը:

Այժմ համեմատենք առաջադրանքներն ու ինքնաստուգման առաջադրանքները

Առաջադրանքներ

1. Հիշիր, թե նախադասությունների ինչպիսի՞ խմբավորումներ կան, որոնց ծանոթացել ես նախորդ դասարաններում, և ամեն մի խմբավորումը կատարելիսո՞ր հատկանիշն են քերականները բաժանման հիմք դարձել:
2. Նախադասության անդամները վաղուց են ուսումնասիրված լեզվաբանների կողմից, և վերջիններս դրանք ևս խմբավորել են: Հիշիր այդ խմբավորումը, որը բաժանման հիմք է դարձել:

Ինքնաստուգման առաջադրանք

Հասկանալի է, որ մակբայները ևս պետք է խմբավորել, որովհետև դրանք շատ են և տարբերվում են իրարից: Եվ ահա լեզվաբանները բոլոր մակբայները բաժանել են 4 խմբի՝ տեղի մակբայ (հեռու, ամենուր), ժամանակի (այժմ, արդեն), ձևի՝ (արագ շարունակ, չափ ու քանակի (ամենևին, ավել): Այդ խմբավորումը կատարելիս նրանք հիմք են ընդունել մակբային հատուկ ինչ-որ հատկանիշ:

Որոշել, թե ներքևում բերված 4 դատողություններից ո՞րն է ճիշտ:

1. Մակբայները խմբավորելիս լեզվաբանները հիմք նե ընդունել մակբայների կազմությունը:
2. Մակբայների խմբավորումը կատարելիս լեզվաբանները, որպես բաժանմանհիմք, ընդունել են մակբայների նշանակությունը:
3. Մակբայները 4 խմբի բաժանելիս հիմք է ծառայել նրանց ուղղագրությունը:
4. Բոլոր մակբայները՝ տեղ, ժամանակ, ձև, չափ ու քանակ ցույց տվող, 4 խմբի բաժանելու հիմք է դարձել նրանց չհոլովվելու և հոդ չստանալու հատկությունը: Յուրաքանչյուր խմբից մեկ աշակերտ մոտենում է գրատախտակին և ներկայացնում մեկ հարցի պատասխանը՝ պատճառաբանելով, թե ինչու՞ է այն ճիշտ կամ սխալ: Եթե լիարժեք չէ, կամ սխալ է պատասխանը նրան կարող են օգնել մյուս խմբի ներկայացուցիչները:

Այսպես ներկայացվում են բոլոր հարցերի պատասխանները, ապա վերջում ամփոփում և գնահատում:



Վերլուծություն

8-րդ դասարանում <<Մակ բ այ >> թեմայի ուսուցման ժամանակ փորձարկեցի համագործակցային ուսուցման մի քանի մեթոդ, ինչպես նաև ԽԻԿ համակարգով դաս անցկացրի: Բոլոր դասերի ընթացքում դասարանի 13 աշակերտներից միջինը 11-ը ակտիվ մասնակցել են, ինչպես նաև որոշ հարցերում ցուցաբերեցին նախաձեռնողականություն: Սրա պատճառը այն էր, որ նրանց ծանոթ մեթոդներ կային, սովոր էին, բայց նաև իրենց համար անծանոթ մեթոդները աշխուժություն առաջացրեցին, նորություն էր նրանց համար: Աշակերտները սիրում են միասին աշխատել, իրար օգնել, դասի ակտիվ կողմը լինել: Կարևոր է նաև առաջադրանքների համակարգը: Եթե տրվում է կազմել նախադասություններ՝ օգտագործելով մակբայներ, ապա պետք է անպայման որևէ ուղղվածություն տալ առաջադրանքին, որը կզարգացնի նրանց գեղարվեստական խոսքի զարգացումը: Օրինակ՝ աշակերտներին առաջարկվում է կազմել նախադասություններ և փոքրիկ կապակցված խոսք բնության գեղեցկությունների մասին՝ օգտագործելով դեմ հանդիման, ամենուր, բերնեբերան, դեմ ու դեմ, տեղ-տեղ մակբայները: Կամ կազմել մի փոքր տեքստ՝ բնությունը պաշտպանելու և պահպանելու անհրաժեշտության մասին՝ օգտագործելով մակբայներ: Այս հանձնարարությունները ունեն նաև բարոյական և գեղագիտական արժեք:

Նման առաջադրանքները երեխաների մոտ հետաքրքրություն են առաջացնում և տնային աշխատանքների ստուգման ժամանակ նրանք ակտիվության բարձր մակարդակով են ունկնդրում յուրաքանչյուրի կազմածը:

Դասարանում մեծ աշխուժություն են առաջացնում գեղարվեստական գրականության էջերից բերված մակբայներ պարունակող առանձին հատվածներ:

Առաջադրանքների այսպիսի համակարգը հնարավորություն է տալիս քերականության դասերը ծառայեցնելու իրենց բուն նպատակին՝ խոսքի զարգացմանը:

Քերականական բոլոր գիտելիքները միջոց են աշակերտի գրագետ, գեղեցիկ և հարուստ խոսք ձևավորելու և զարգացնելու համար:

Այս դասերի ընթացքում կներգրավվեն նաև ԿԱՊԿՈՒ երեխաները, համագործակցային ուսուցման միջոցով կլուծվի նաև նրանց ներգրավածության հարցը:

Այսպիսով՝ 8-րդ դասարանում փորձարկված դասերից ստացվեց հետևյալ պատկերը՝ եթե ավանդական մեթոդներով անցկացված դասին արձանագրվեց միջինում 7 աշակերտի մասնակցություն, ապա համագործակցային ուսուցման մեթոդներով անցկացված դասին արձանագրվեց միջինում 11 աշակերտի ներգրավածություն: Ուսուցման արդյունավետությունն է վկայում նաև աշակերտների ոգևորվածությունը, նրանց կարծիքները, որ դասն ավելի հետաքրքիր էր, <<հավես>> էր:

Մասնակցության վերլուծություն



Եզրակացություն

Համագործակցային ուսուցման մեթոդներ կիրառությամբ դասերը արդյունավետ եմ գնահատում, քանի որ դասերը դարձան տարբերվող, հետաքրքիր, նյութը յուրացվեց։ Դասապրոցեսի ժամանակ յուրաքանչյուր աշակերտ պատասխանատու էր հանձնարարված առաջադրանքը կատարելու համար և գիտակցում էր, որ հիմնական խնդիրը առաջադրանքի արդյունքը ստանալն է։ Սովորաբար աշակերտները սկզբում կարող են անտեսել դա։ Բայց աշակերտները լրջորեն են վերաբերվում այս հարցին, երբ խորապես զգում են, որ յուրաքանչյուր աշակերտ պատասխանատու է ոչ միայն իր առաջադրանքը կատարելու, այլ նաև այս փոքր խմբին տրված ընդհանուր հանձնարարության համար։ Արդյունքում, աշակերտները ներգրավվում են այնպիսի գործողությունների մեջ, որոնք կարևոր են սովորելու համար՝ հարցեր տալով, ուսուցանելով և վիճելով միմյանց հետ։ Թույլ աշակերտները ուժեղ աշակերտներին հարցնում են այն, ինչ նրանք չեն հասկանում։ Նման միջավայրում ուժեղ աշակերտը կկարողանա լիովին դրսևորել իր կարողությունները։ Աշակերտը ստուգում է իր տեսակետը, ստուգում է իր ուժը։ Օգնում է մեկ այլ սովորողի և նրանք միասին ուսումնասիրում և հասկանում են խնդրի էությունը։ Արդյունքը աշակերտների համար համատեղ ուսուցման գործընկերությունն է։ Այս մեթոդը լավ արդյունքներ է տալիս։ Աշակերտներին ավելի շատ ջանքեր են պետք սովորելու, հասկանալու, նյութի մասին խորը մտածելու, խնդրի էությունը հասկանալու, խնդիրը լուծելու և վերջնական արդյունք ստանալու համար։ Որպեսզի աշակերտը հավաքի, ընտրի ևկիրառի տեղեկատվություն, կարևոր է ոչ միայն ուսուցչից կամ գրքից օգնություն ստանալը,այլև փոքր խմբում աշխատել այլ սովորողների հետ և գնահատել նրանց գիտելիքները։ Ի վերջո, աշակերտը կունենա ինքնուրույն սովորելու ավելի մեծ խթան։ Այս արդյունքը նաև շատ հարմար է ուսուցչի համար։ Նման գործընկերության դեպքում զարգանում է սովորողի ուսումնական գործունեությունը, նյութի յուրացումն ավելի հեշտ ու արդյունավետ է կազմակերպվում։

Գրականության ցանկ

1.Խաչատրյան Ս. Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006
2. Խաչատրյան Ս. Գ., Աշակերտների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքի ձևերը մայրենիի ժամերին /համագործակցային ուսուցում/, Նախաշավիղ, 1. 2003
3. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում,Երևան, 2006
4. Մանկավարժություն, Երևան, 2007
5. Մկրտչյան Մ., Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը, Երևան, 2011
6. Վարդումյան Ս., Ջաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, 2005
7. Ուսուցչի մասնագիտական գործունեության ժամանակակից մոդելները, Երևան, 2007

8. https://elearning.iedf.am/course/view.php?id=585 հաս. 19.11.2021

9. https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%A1%D5%AF%D5%A2%D5%A1%D5%B5 հաս. 19.11.2021

10. https://sportedu.am/wp-content6 հաս. 19.11.2021

11. «Կրթություն» շաբաթաթերթ, հաս. 11.11.2021

Հավելված 1

Դասի պլան 1
/Նաիրա Մելիքսեթյանի դասի օրինակ, որը ես փորձարկել եմ/

Առարկան - հայոց լեզու
Դասարանը - 8-րդ դասարան
Թեման - Մակբայ (ամփոփում)
Նպատակները ա/ ակադեմիական - հասնել նրան, որ սովորողը տեքստում տարբերակի մակբայները, դրանց տեսակները, ոճական կիրառությունները
բ/ զարգացնող- զարգացնել համեմատելու, վերլուծելու կարողություն, հասնել նրան, որ սովորողը կարողանա համագործակցել, կարծիք հայտնել
Դասի ընթացքը.
Կազմակերպչական մաս - 2 րոպե
Խթանում.
Խթանումը կատարել ԹԽԱ մեթոդով, այնուհետև հանձնարարել գրական ստեղծագործություններից վերհիշել համապատասխան օրինակներ -5 րոպե
Իմաստի ընկալում.
Կիրառել «Ֆրայերի մոդելը» /5 րոպե/
Գրատախտակը կամ ցուցապաստառը բաժանում ենք 4 մասի, մեջտեղում `շրջանի մեջ, գրում ենք մակբայ: Վերևի ձախ անկյունում գրում ենք էական հատկանիշներ (գործողության հատկանիշ ցույց տալը, չթեքվելը, նախադասության անդամ դառնալը): Վերևի աջ անկյունում գրում ենք ոչ էական հատկանիշներ (կազմությունը, ընդհանրական տեսակը, հարաբերակցությունը դերանունների և կապերի հետ): Ներքևի ձախ անկյունում գրում ենք համապատասխան օրինակներ, իսկ աջ անկյունում՝ ոչ համապատասխան օրինակներ (օրինակը՝ ստորև):
Կատարել աշխատանքների քննարկում : /5 րոպե/
Կատարել քարտային աշխատանք/8 րոպե/:Դասարանը բաժանել 4 խմբի, յուրաքանչյուր խմբին տալ մակբայի մի տեսակին բնորոշող փոքրիկ տեքստ՝ ամեն բառը կտրտված թերթիկի մի կտորի վրա: Խումբը պետք է բառերն այնպես դասավորի, որ տեքստը ճիշտ լինի,այնուհետև բաժանել թերթիկների վրա գրված մակբայներ: Խմբի անդամները պետք է թերթիկներից ընտրեն տեքստին համապատասխանը և տեղադրեն համապատասխան տեղում: Աշխատանքն ավարտելուց հետո թերթիկները ամրացնել իրար և շրջել:Եթե աշխատանքը ճիշտ է կատարված, հակառակ կողմում կստանան մակբայի տվյալ տեսակի սահմանումը (ուսուցիչը պետք է նախօրոք թերթիկների երկու կողմերն էլ պատրաստի): Կատարել աշխատանքների քննարկում : /5 րոպե/
ԳՈՒՍ մեթոդով գտնել մակբայների գործառական ոլորտները, բերել համապատասխան օրինակներ: /5 րոպե/
Կշռադատում.
Կիրառել «Շրջագայություն պատկերասրահով» մեթոդը -8 րոպե
Ամփոփման համար կիրառել համակարգչային խաղ՝ հղումով՝
https://learningapps.org/display?v=pdduopfq518:
Գնահատում- 2 րոպե

Վերլուծություն 1

Դասի պլանը վերցրել եմ գործընկերոջիցս, նրա փորձարկած և հաջողված դասն էր, ինձ հետաքրքիր էր, թե այն իմ դասարանում, իմ և աշակերտներիս մոտ ինչպես կստացվի: Դասն անցավ շատ աշխույժ ու հետաքրքիր, թեմայի ամփոփման համար շատ լավ օրինակ է, դասին ներգրավված էր ամբողջ դասարանը՝ 13 աշակերտ, բայց մեզ մոտ խնդիր եղավ՝ ժամանակը քիչ էր,

հղումով դրված խաղը չհասցրեցինք։ Բայց ընդհանուր առմամբ շատ արդյունավետ դաս էր, մեթոդները՝ ճիշտ ընտրված, հասա դասի սկզբում դրված նպատակին։

Եզրակացություն 1

Դասի օրինակը կարելիէ կիրառել նաև այլ թեմաների ամփոփման ժամանակ, ամփոփման դասի շատ լավ ու արդյունավետ միջոց է, որի շնորհիվ դասարանի տարբեր կարողությունների տեր բոլոր աշակերտներն էլ ներգրավվում են դասին։

Դասի պլան 2

Առարկա՝ Հայոց լեզու

Դասարան՝ 8-րդ

Տևողություն՝ 45 րոպե

Դասի թեմա՝ Մակբայը որպես խոսքի մաս

Դասի նպատակներ

1. Սովորեցնել՝ ինչ է մակբայը, նրա ընդհանուր հատկանիշները, ձևաբանական առանձնահատկությունը, տեսակները և շարահյուսական դերը

2.

11. Վերլուծական և քննադատական մտածողության հմտություններ

64. Կարող է տարբերակել նոր և արդեն հայտնի տեղեկատվության նմանություններն ու տարբերությունները:

1. Խթանել նոր և արդեն հայտնի տեղեկատվության նմանություններն ու տարբերությունները տարբերելու կարողությունը:

2. Զարգացնել նոր և արդեն հայտնի տեղեկատվության նմանություններն ու տարբերությունները տարբերելու հմտությունը:

Դասի վերջնարդյունք

1. կկարողանան՝ ճանաչել և իրարից տարբերել մակբայների տեսակները

2. տեքստում գտնել և վերլուծել մակբայները

Մեթոդները՝ Կարճ դասախոսություն,

Մտքի քարտեզագրում

Խմբային աշխատանք քարտերով

Միջոցները՝ Դասագիրք, քարտեր

ԽԻԿ համակարգ.

Ընթացքը՝ **Կազմակերպչական մաս՝** առանձին թերթիկների վրա գրել ձևի մակբայ, ժամանակի մակբայ, տեղի մակբայ, չափ ու քանակի մակբայ,

յուրաքանչյուր աշակերտ վերցնում է մի թերթիկ և կազմվում են խմբեր մակբայի տեսակներին համապատասխան: (3 րոպե)

1Խթանման փուլ (5 րոպե)՝ Յուրաքանչյուր խումբ թերթիկների վրա գրի գործողություն ցույց տվող բառեր (բայեր): Որից հետո խմբի անդամներից յուրաքանչյուրը կարդում է իր գրած բառերը/այստեղ աշակերտներին մի նախադասությամբ պիտի ասենք,որ իրենք աշխատում են իրենց հայտնի տեղեկության հետ, աշակերտների հետ պարզաբանել՝ ինչ է արդեն հայտնի նյութը, այսինքն՝ ինչը գիտենք. գործողություն ցույց տվող բառերի կամ բայերի մասին արդեն գիտենք 7-րդ դասարանից/:

2 Իմաստի ընկալման փուլ (15 րոպե)՝ Կարճ դասախոսության միջոցով բացատրել մակբայի իմաստը: Ուսուցիչը նախ ասում է, որ գործողության տեղ, ժամանակ, ձև, չափ ու քանակ ցույց տվող բառերը կոչվում են մակբայ: Մակբայները տարբերվում են գործողության տեղ, ժամանակ, ձև, չափ ցույց տվող գոյականներից և այլ խոսքի մասերից նրանով, որ չեն հոլովվում և հոդ չեն ստանում, այսինքն՝ մակբայը չթեքվող խոսքի մաս է: Մակբայները նախադասության մեջ դառնում են բայական անդամի լրացում:

Կարճ դասախոսությունից հետո 1-ին (տեղի մակբայ) խմբին հանձնարարել իրենց գրած բայերին ավելացնել որտե՞ղ հարցին պատասխանող բառեր:

2-րդ (ժամանակի մակբայ) խմբին հանձնարարել իրենց գրած բայերին ավելացնել ե՞րբ հարցին պատասխանող բառեր:

3-րդ (ձևի մակբայ) խմբին հանձնարարել իրենց գրած բայերին ավելացնել ինչպե՞ս հարցին պատասխանող բառեր:

4-րդ (չափ ու քանակի մակբայ) խմբին հանձնարարել իրենց գրած բայերին ավելացնել ինչքա՞ն, որքա՞ն հարցերին պատասխանող բառեր:

Այնուհետև յուրաքանչյուր խումբ գալիս է այն եզրահանգման, որ միևնույն հարցին պատասխանող բառերի միջև կա ընդհանրություն և փորձում է սահմանել կանոնը: Առաջին խումբը համակարգչից օգտվելով ստուգում է երկրորդ խմբի սահմանած կանոնը, երկրորդ խմբի սահմանած կանոնը ստուգում է չորրորդ խումբը, երրորդինը՝ երկրորդը, չորրորդին ստուգում է երրորդ խումբը: Իսկ ուսուցիչը հետևում, ուղղորդում և խրախուսում է խմբերին:/այստեղ կձևավորենք նոր և արդեն իմացած նյութի հետ աշխատելու, նրանց նմանություններն ու տարբերությունները գտնելու, տարբերակելու կարողություն, աշակերտներին կհանձնարարենք համացանցից օգտվելով հանել տեղեկատվություն մակբայի մասին, որով էլ ստուգել խմբերի աշխատանքները /

Այնուհետև յուրաքանչյուր խումբ կազմում է մտքի քարտեզ և կպցնում գրատախտակին: Առաջին խմբի կազմած քարտեզը կստուգի չորրորդ խումբը, երկրորդ խմբինը՝ առաջին խումբը, երրորդ խմբինը՝ երկրորդ խումբը, իսկ երկրորդ խմբի կազմած քարտեզը կստուգի երրորդ խումբը/շրջագայություն պատկերասրահով/:/ Նոր և արդեն հայտնի տեղեկության համադրություն, նմանություններն ու տարբերություններն գտնելու ևտարբերակելու կարողություն/

3. Կշռադատման փուլում (15 րոպե) կատարել **քարտային աշխատանք**:

Առաջին խումբ

Քարտ 1-ին. Դուրս գրի՛ր մակբայները և որոշի՛ր, թե ինչ են ցույց տալիս.

Երկնքում ամպած, տխուր ու սև, Սի՛րտ իմ, արի չկռվենք,

Լաց էր լինում միալար,
Հեռու՞, հեռու՞ լեռան ետև
Խաղում փայլակն անդադար (Հ.Թ.):

Էլ չլինենք մանր ու թեթև,
Մի անգամ լավ բացատրվենք
Ու հաշտ լինենք այնուհոտև:

Երկրորդ խումբ

Քարտ 2-րդ. Տրված օրինակներում որոշի՛ր ընդհանրական մակբայների տեսակները՝ ըստ կիրառության.

Առաջ կե՛ր, վերջը գոհացի՛ր: Հանկարծ բազմությունից զատվելով՝ դողդողալով քայլեց առաջ մի ծերունի՝ հայացքն ուղղած կենտրոնում հավաքվածներին: Ականջիս տակ անընդհատ լսվում էր տանտիկնոջ ճղճղան ձայնը: Սուրենն անընդհատ խոսում էր , և հավաքվածները արդեն բան չէին հասկանում:

Երրորդ խումբ

Քարտ 3-րդ. Գտի՛ր մակբայները, որոշի՛ր դրանց տեսակը, բացատրի՛ր դրանց կազմությունը.

Մի քանի րոպե չանցած՝ անտառը ողողվեց ամբողջապես. Նրա զառիվայրից սկսեցին հոսել առուներ, ճանապարհի հետքը կորավ բոլորովին: Ապա քամին քիչ-քիչ դադարեց, փայլակն սկսեց շողալ մերթընդմերթ, և որոտը լսվում էր ավելի խուլ: Այդ նշան էր, որ փոթորիկն անցելէր հեռու կողմերը:

Չորրորդ խումբ

Քարտ 4-րդ. Առանձնացրու՛ տրված մակբայները՝ ըստ տեսակների եկազմի՛ր նախադասություններ.

Բազմիցս, երբեք, հեռու, այլևս, պատեպատ, մոտավորապես, հետու, բարոյապես, հիմնովին, ազահաբար, ուշ- ուշ, հնուց, ցմահ, հնուց, անդադար, ներկայումս, մերթ, շարունակ, դուրս, մեղմորեն, դարձյալ, կրկին:

Վերջում խմբերը կներկայացնեն իրենց աշխատանքները:

Կատարել անդրադարձ /5 րոպե/՝ նոր և արդեն հայտնի տեղեկատվության նմանություններն ու տարբերությունները գրել, գրատախտակին Т-ձև աղյուսակով ներկայացնել արդեն ծանոթ և նոր տեղեկությունները, աշակերտներին հարցնել, թե ինչ գիտեինք մինչ դասը, իսկ այսօր ինչ իմացանք, որտեղից ենք վերցրել տեղեկատվությունը՝ գրքերից, համացանցից, որ կայքերից հատկապես՝ այն կայքերից, որոնցից մշտապես օգտվելենք, թե նոր կայք, աշակերտներին անպայման պիտի ասել, որ ուշադիր լինեն նոր կայքերի հետ, ստուգեն այն տեղեկատվությունը մի քանի կայքերի միջոցով, որ վերցրել են, /փորձած թանը չփոխել անփորձ մածունի հետ/:

Տնային **աշխատանքի** հանձնարարում :(2 րոպե)

Վերլուծություն 2

Դասի ժամանակ սովորական պլանի մեջ կատարվել է փոփոխություն-նորարություն՝ դասի պլանում ներառվել են կոմպետեցիաներ/ տե՛ս հղումով/
https://docs.google.com/presentation/d/1orSwdpkibaStsfEWQ6BIamCCDPPvha3f/edit?usp=sharing&ouid=102003175154980881482&rtpof=true&sd=true

Առաջին անգամ հայոց լեզվի ուսուցման կազմակերպման ընթացքում փորձեցի այս նոր բաղադրիչի ինտեգրումը, որը դասը դարձրեց ավելի հագեցած, ավելի հետաքրքիր ինձ ու աշակերտների համար, իրենք էլ զգացին ու քննարկման ժամանակ ասացին, որ այսօրվա դասը մի տեսակ ավելի հետաքրքիր էր, ուրիշ էր։
Դասին ներգրավված էին բոլոր աշակերտները, քանի որ խմբային և քարտային աշխատանքներ արվեցին, ուղղակի կային ակտիվ և ոչ այնքան ակտիվ աշակերտներ, գնահատման և քննարկման ժամանակ անդրադարձ արեցինք դրան։

Եզրակացություն 2

Այս նոր բաղադրիչի ինտեգրումը ավել ժամանակ չի խլում, այն ինտեգրվում է դասին, առաջադրանքների միջոցով է կատարվում, խոսքի միջոցով է արվում, բայց կարևոր նպատակ է հետապնդում։ Կարծում եմ՝ հաճախ կանեմ այսպիսի դասեր։

Դասի պլան 3

Դասի պլան

Դասարանը-8-րդ դասարան

Առարկան-Հայոց լեզու Դասի

թեման- Մակբայներ Դասի

տիպը- Համակցված Դասի

նպատակը-

1. Հասնել նրան,որ աշակերտները ճանաչեն մակբայ խոսքի մասը:
2. Իմանալ բարդ մակբայների խոսքիմասային պատկանելությունը,դրանց կազմությունն ու ուղղագրությունը:
3. Առաջացնել հետաքրքրություն մակբայների շարահյուսական կիրառության նկատմամբ:
4. Տեքստից գտնել մակբայները,որոշել նրանց տեսակը,կազմությունը:
5. Օգնել,որ աշակերտները հեշտությամբ տարբերեն մակբայը այլ խոսքի մասերից:
6. Նպաստել,որ կարողանան կատարել ճիշտ խոսքամասային վերլուծություն:

Մեթոդները- Մտագրոհ,պրիզմա, պնդումների փունջ:

Դասի ընթացքը-

Կազմակերպչական մաս

Հաշվառում

Մտագրոհ

ա/Ո՞րն է դասի թեման:

բ/Ի՞նչ են ցույց տալիս մակբայները:

գ/Քանի՞ տեսակի մակբայներ կան:

Տնային աշխատանքի ստուգում -,,Ես սիրում եմ իմ երկիրը,,վերնագրով շարադրություն,դուրս գրել քառյակներ,որտեղ լինեն մակբայներ:

Դասն անցկացվում է խմբային մեթոդով՝ ընտրելով ,,Տեղ,, , ,,Ժամանակ,, , ,,Ձև,, , ,,Չափ,, անունները:

Խմբերը ներկայացնում են իրենց
գրած ակրոստիքոսները,որոնց սկզբնատառերը գրում են համապատասխանաբար

,,Հայրենիք,, , ,,Հայաստան,, , ,,Անկախություն,, , ,, Մակբայ,, բառերը:

Խմբերը ներկայացնում են իրենց նշանաբանները, ինչպես նաև մի բանաստեղծություն:Պ.

Սևակ ,,Հայաստան,,

Եղ. Չարենց ,,Ես իմ անուշ Հայաստանի,,Հ.

Սահյան ,,Հայաստան ասելիս,,

Երգ - ,,Սա իմ տունն է,,

Աշակերտներից մի քանիսը կարդում են շարադրությունը:Ունկնդրում

են ,,Կարմիր, կապույտ, ծիրանագույն,, երգը:

Խմբերը ներկայացնում են մակբայները, բերում օրինակներ, հիմնավորում:

Աղյուսակի միջոցով ուսուցիչը ներկայացնում է ընդհանրական մակբայները,կազմում նախադասություններ;

ՏԵՂ ԺԱՄԱՆԱԿ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

ՁԵՎ ՉԱՓ

Կատարվում են մի քանի վարժություններ:

Պնդումների փնջի միջոցով կրկնվում է նյութը և ամրապընդվում:

Պրիզմայի մեթոդով և աշակերտների միջոցով ստանում ենք

օրվա խորհուրդը բնորոշող գլխավոր բառերը՝

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ

Ունկնդրում են ,,Հայն ու Հայստանը,, երգը:

Աշակերտները գնահատվում են խմբային մեթոդով՝գրատախտակին գծված աղյուսակ ի միջոցով:

դասը եզրափակվում է Հ. Շիրազի ,,Իմ սուրբ հայրենիք բանաստեղծությամբ:

Տնային աշխատանք- Հ.
Շիրազի ,, Իմ սուրբ հայրենիք,, բանաստեղծությունը ենթարկել ձևաբանական վերլուծության:

https://docs.google.com/presentation/d/14na1Xfpm7iLhu_aQPoJXRMQdlkZXF2a-N5BZGl-zIKc/edit?usp=sharing

Վերլուծություն 2

Դասի ժամանակ առանձնահատուկ ուշադրություն և անդրադարձ կար մեր հայրենիքին, հայրենասիրությանը, վերջին մեկ տարվա իրադարձությունները պատճառ դարձան, որ այս թեմային ավելի ուշադիր ու զգույշ լինենք: Դասը մակբայի տեսակների ամրապնդման դաս էր, գրականության, երաժշտության, պատմության, աշխարհագրության միջառարկայականկապը լավագույնս պահեց, բայց այստեղ հստակ երևացին ակտիվ աշակերտները, դասին ներգրաված էին հիմնականում 10 հոգին, մյուս երեքը այնքան էլ չմասնակցեցին, զգացվեց,որ ճնշվեցին մյուս աշակերտների ակտիվությունից՝ հատկապես պատմության և աշխարհագրության իմացությունից: Կարելի է մյուս դասերին այս հանգամանքը այնպայման հաշվի առնել ու դասի պլանը կազմելիս նրանց ներգրավվման համար հետաքրքիր մեթոդ կիրառել:

Հավելված 4

Օժանդակ նյութերի հղումներ

https://www.canva.com/design/DAEtMlQJwt0/bzfTeXROgQEzLLbCoeOZkQ/edit https://app.wisemapping.com/c/maps/1216873/edit .

https://miro.com/app/board/o9J_lnsoAaI=/
http://linoit.com/users/eleonoramir/canvases/%D4%B4%D5%A1%D5%BD%201
https://app.popplet.com/#/p/6823953
https://quizizz.com/admin/quiz/60e84042e26b1d001c946224
https://learningapps.org/display?v=pwi0yrfx221
https://learningapps.org/display?v=pnwoe0okc21
https://www.canva.com/design/DAEtLy8K7QM/C22jJj__jjviHTa3yUJ6Uyw
https://www.canva.com/design/DAEtMlQJwt0/PzrZ41Z9TUikpthvcFgsPQ/view?utm__content=DAEtMlQJwt0&utm__campaign=designshare&utm__medium=link&utm__source=homepage_design_menu
https://www.canva.com/design/DAEtLy8K7QM/EvSOqAXE9GY2ElO2vO-Z-A/view?utm__content=DAEtLy8K7QM&utm__campaign=designshare&utm__medium=link&utm__source=homepage_design_menu
https://www.mindmeister.com/map/2098476535?t=Ji7bjvmrc5